ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նման փոփոխության անհրաժեշտությունը չկա, քանի որ, համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, «Արգելվում է ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը) սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո, ինչպես նաեւ այն ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը), որի համար պետք է սահմանված լիներ ծառայության կամ պիտանիության ժամկետ, բայց չի սահմանվել:»: Ինչ վերաբերում է պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից բնօրինակի վրա նշված պիտանիության ժամկետը ջնջված եւ նոր ժամկետի նշումով սննդամթերքին, ապա դա համարվում է մակնշման փոփոխություն եւ, համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի, որակավորվում է որպես «կեղծված սննդամթերք», որի վաճառքի համար սահմանված է համապատասխան վարչական պատասխանատվություն:	Առաջարկվում է նախագիծը հանել փաթեթից:	Նախագիծը փաթեթից հանվել է: